

## ՄՏԱԿՈՐ ՅՈՒՆԱԺՈՒԹԱՒՆ

### I

Ով թեթև ակնարկ է ձգում շրջապատող կեանքի վրայ՝ ամեն տեղ կուր է տեսնում. Իւրաքանչիւր ոք աշխտում է հնալքներ գանել, նոր նոր զէնքեր ձեռք բերել, որ կարողանայ կեանքի վեհ կոռուի մէջ քաջարար կոռուել, յաղթել և ազատ, պարզերես դուրս դալ դրանից. Կեանքը անողոք է, նա խղճալ չգիտէ, ամենքին անխտիր հալածում է և միատեսակ է նայում, լինի նա ազնուական, հարուստ, աղքատ, կոռուելու ոյժ ունիս, ասում է նա, ասպարէղ իջիլ, աշխատիր յաղթանակ տանել, եթէ ոչ չպէտք է ապրես և արժանի չես աշխարհի բարիքներից վայելել. ահա այս է բնութեան և կեանքի անողոք լինուր. Այս բանը բնական օրէնք է ամեն տեղ, ամեն մարդու և կենդանու համար. Ամեն մի ճճի, ամեն մի ճանճ, սողուն և կենդանի արարած պաշտպանուելու որևէ զէնք, կերակուր ձեռք բերելու միջոց ունի և դրանով կարող է իրան, սերնդին պահել, մեծացնել ու նոր սերոնդ թողնել. Մարդն էլ ունի մտածող խելք. սրանով սարեր է ճեղքում ճանապարհներ անցկացնում. ծովեր, ովկիանոսներ պատառում շոգենաւներ լողացնում, երկրի սիրտը քանդում հանքեր դուրս բերում. ջուրը շոգիացնելով շոգեշարժ մեքենաներ հնարում, էլեքտրական, մտգնիսական և այլ ոյժերի միջոցով հրաշքներ գործում, զանազան գործիքներով տիեզերքի անհուն եթերը քննելով՝ աչքին անտեսանելի բազմաթիւ մոլորակներ հետազոտում, օրէնքներ ստեղծում. Սրանց հետ միասին աչքին անտեսանելի մժղուկներ մանրացոյցի տակ քննելով՝ ամեն ինչ երևան բերում և զանազան հիւանդութիւնների վտանգների առաջն առնում. Այս ամենի միակ նպատակն է մարդուն բարձրացնել կոռուելու նորանոր զէնքեր տալ, որպէսզի միջոց ունենայ աւելի շատ բան ձեռք բերել և կեանքի կոռուի մէջ անկորուստ իր և սերնդի գոյութիւնը ապահովել.

Կեանքի կուռի համար, այդ զէնքերի գլխաւոր աղբիւրը համարւում է գիտութիւնը, ուսումը: Այս մասին արդէն շատ նշանաւոր քաղաքատնտեսներ վիճակագրական տեղեկութիւններով հաստատել են, թէ այս ազգը աւելի հարուստ, ապահով դրութիւն և փայլուն ապագայ ունի՝ որի դպրոցական գործը շատ ընդհանրացած է և բարձրագոյն, մասնագիտական դպրոցները բազմաթիւ են: Այսպէս, ներկայումս հիւսիսային Ամերիկայի մեացեալ նահանգները, ուրիշ պատճառների հետ միասին, իրանց հարստութեան գլխաւոր աղբիւրը համարում են դպրոցները և կրթութեան գործը՝ ապա հերթը գալիս է Անգլիային և նոր միւս երոպական պետութիւններին:

Ոչ թէ միայն բարձրագոյն կրթութիւնը, միջնակարդ ուսումը մարդուս կռուելու զէնքեր են տալիս, այլ և նոյն իսկ տարրական դպրոցները, հասարակ գրագիտութիւնը մեծ նշանակութիւն և աղդեցութիւն ունի կենսամարտի մէջ: Ով փոքր իշտ է սովորել է կանոնաւոր աշխատանքի, սիստեմատիքաբար միտքը լարել և մատածելու ընդունակութիւնը վարժեցրել է նա կեանքի մէջ ամեն ինչ աւելի շուտ է ըմբռնում, հասկանում, գլխի ընկնում, նոր միջոցներով գործում և փող վաստակում՝ քան անկիրթ, գուեհիկ անդրագէտը: Նոյն իսկ Փիգիքական կոպիտ աշխատանքի մէջ, փոքր իշտ է մտածող, կրթուած ու ընդունակ ուղեղը, աւելի հեշտ միջոց է որոնում, աշխատանքը թեթևացնում, ժամանակը կարճացնում է գործը արագացնում է: Եթէ այդպէս է, ուրեմն պէտք է ուսման, գիտութեան, դպրոցների և այն անհատների, որոնք մեզ կռուելու յարմարաւոր միջոցներ են տալիս, նրանց հետ կապուենք, աշխատանք շատ բան սսվորել, որ կեանքի մէջ պարզերես, համարձակ գուրս գանք և յաղթանակ տանենք: Մենք պարտաւոր ենք ամեն միջոց գործ դնել, գրել կարդալ սովորել, մեր միտքը վարժեցնել, սիրու ազնուացնել և օգտակար, պիտանի լինել մեզ, մեր սերնդին և ընդհանրութեան համար, Այժմ ամեն մի քաղաքակիրթ ազգ աշխատում է ոչ միայն իր դպրոցները շատացնել, այլ աւելի կարգի բերել և ապագայ սերնդի համար անյաջողութիւններ, խոշնդուներ առաջ բերող միջոցները հեռացնել: Ահա այսպիսով նոր սերունդը մտքով ու մարմնով առողջ, կեանքի մէջ դիմացկուն կըլինի, Դպրոցների, ընտանիքների ու մասնաւոր մարդկանց մօտ գրել կարդալ սովորող և առհասարակ դաստիարակուող մանուկների մէջ շատ անգամ մեծ մեծ վնասներ են առաջ գա-

միս։ Սրանք թէև գիտութեան պաշարով զինուած են լինում, բայց ուժ չեն ունենում կեանքի մէջ մշտական և կանոնաւոր գործելի Այսպիսիները, իրանց սովորած օգտաւէտ ուսմունքների հետ վնասներ էլ են ստանում. ինչպէս, աչքացաւ, կարճատեսութիւն, ողնաշարի ժռութիւն, ստամոքսի խանդարում, նեարդերի թռութիւն, մտքի յոդնածութիւն և այլն։ Մարդիկ, գիտութեան միջոցավ աշխատում են այդ ամենի առաջն առնել, որ սովորող, մատաղ սերունդը մարմնով ու հոգով առողջ լինի. Կետևելով շատ դարեր առաջ ասած այն ճշմարտութեանը՝ թէ առողջ հոգին, միայն առողջ մարմնի մէջ կարող է լինել։

Անկանոն կերպով ուսում ստանալուց, գրել կարդալ սովորելուց առաջ եկած վնասներից մէկի մասին է խօսքս. սա մարդու աւողջութեան, ապագայ գործունէութեան, իրան և ընդհանրութեան օգնելու համար մեծ նշանակութիւն ունի։ Այդ հարցը մտաւոր յոդնածութիւնն ու ծանրաբեռնութիւնն է, որ շատ տարիներ առաջ եւրոպական ազգերի ուշադրութիւնը գրաւել է, որի դէմ աշխատել են և աշխատում են առնել։ Մեզանից իւրաքանչիւրը շատ անգամ տեսել, լսել և ինքն իրահամար փորձել է. երբ արագ վազում, աշխատում է, երկար ճանապարհ է գնում, բեռ է ատանում՝ թռուլանում և էլ չի կարող իր աշխատանքը, ճանապարհը շարունակել նա ստիպուած նստում է հանդստանալու, ուժերը կազմակերպելու, որ նոր ուժ հաւաքէ և գործը շարունակէ։ Այսպիսի դէպքերում, սովորաբար ասում ենք. յոդնած բեղարած ենք, նթէ ուզենանք շատ և միշտ աշխատել, այն ժամանակ մեր մկանունքները սաստիկ յոգնելուց թռուլանում, թմրում և էլ չեն կարող աշխատել։ Նրանք մնջանից պահանջում են սնունդ, հանդստութիւն, քուն. եթէ այս չկատարենք, այն ժամանակ բոլորովին թռուլանում և գործի համար անպէտք են դառնում։ Այժմ մեզ մնում է մի քանի ժամուայ տեղ, օրերով շարաթներով, անգամ ամիսներով հանդստանալ մինչև որ նրանք կազդուրուին և աշխատելու նորից ընդունակ դառնան։ Նթէ յոդնածութեսն վրայ մի փոքր ուշք դարձնենք և կանոնաւոր հետեւնք, կը տեսնենք, որ մկանունքները աշխատանքի սկզբում թոյլ են գործում, ապա հետզետէ աւելի լաւ են գոլծում և այդպէս բաւականին ժամանակ շարունակ, կանոնաւոր աշխատում են. եթէ սրանից յետոյ նորից շարունակեն, այն ժամանակ գործունէութիւնը հետզհետէ թռուլանում

և վերջը կանգնում է։ Այս դրութեանը ասում ենք յոզնածութիւն։

Մկանունքների յոզնածութիւնը դիտական փորձերով, նուրբ գործիքներով, արդէն ապացուցել են Հելմհօլց, Մօսօ, Մազիանօրս և ուրիշները։ Սրանք ցոյց տուին, որ մկանունքների յոզնածութիւնը կարող է զանազան հանգամանքներից առաջ դալ. ինչպէս օրինակ մարմնի ոյժի պակասելուց, կեանքի անյարմար դէպքերից, քննելու կարճ ժամանակամիջոցից, հանգստութեան պակասութիւնից, վաս անդուրեկան տրամադրութիւնից, կրկնուող, զրդուիչ յուզմունքներից, տխրութիւնից և այլն։ Այսպէս էլ Փիզիքական և հոգեկան լարուած դրութիւնը, միշտ և ամեն ժամանակ, մարդուն որոշ չափով թուլացնում, յոզնեցնում է։ Երբ աշխատանքը բարձր աստիճանի է հասնում և մենք այլ ևս շենք շարունակում, այլ որոշ չափով հանգստանում, կազդուրաւում, սնունդ հնք ստանում ու նորից աշխատում դրանով մեր մկանունքներին հետզետէ աշխատանքի ենք սովորեցնում և նրանց ուժը, աստիճանաբար բարձրացնում։ Դանք այժմ ոչ թէ ուժեղ, այլ և ամրապնդում, հաստանում և աւելի առողջ են լինում։ Նորից կրկնում եմ, այս ամենը լինում է միայն այն դէպքում երբ մենք նրանց շենք յոզնեցնում, այլ աստիճանաբար աշխատելու ենք վարժեցնում։ Այստեղից հարց է առաջ գալիս. արդեօք կարմղ ենք մեր ժամանակը այնպէս կանոնաւոր տնտեսել աշխատանքի ու հանգստութեան մէջ, որոշ չափ ու սահման դնել, որ մեր ոյժերը չսպառուեն, չթուլանան։ Այս հարցին այն ասելը դժուար է. մեր կեանքի պահանջները օրէօք բազմանում են, անտեղի՝ անժամանակ զուարձութիւններ, անհանգիստ կեանքը, անձնական շահների, պաշտօնների յետեից ընկնելու անյագ տենչն ու ցանկութիւնները և այլն մեր կանոնաւոր աշխատելու ընդունակութիւնը քայլայում, մեռցնում են։ Այսպիսով, շատ անդամ լաւ ձգտումներ ունեցող մարդիկ, տաղանդաւոր երիտասարդներ, կորչում, անհետանում են։ Քանի քանի աղջկներ, տղաներ, կեանքի բարդութիւնների մէջ ընկդմելով իրանց չնորհն ու եռանդը կորցրել, կեանքի համար անակտք մարդիկ են դարձել։ Սրանց պակասաւոր օրինակը, անշուշտ նման մարդկանց նոյն դրութեանն է հասցնում. սրանք էլ ծնողներ դառնալով, նոյն տեսակ պահանջներ իրանց փոքրերին սովորեցնելով վնասի քանակութիւնը շատացնում են։ Փառահեղ ճաշկերոյթները,

փարթամ սեղանները, շքեղ պարահանդէսները, տօնակատարութիւնները, ոչ մի ժամանուկ մարդկային հանճարներ, ապանդներ, ստեղծագործութիւններ չեն առաջ բերել. այլ հանգիստ, խաղաղ կեանքը, առանձնացած աշխատանքի սենեակները և աշխատանոցները:

Միւս կողմից, մեզ բնախօսութիւնը ցոյց է տալիս, որ երբ կեանքի այդպիսի հանդամանքների հետ միանում է և մտաւոր ծանրաբեռնութիւնը՝ այն ժամանուկ մարդուս կազմուածքը թուլանում է։ Արդէն յայտնի է, որ ուղեղը մտածողութեան և բոլոր հոգեկան գործողութիւնների կենդրոնն է համարւում նոյն ուղեղը ծածկուած է բազմաթիւ, մազանման արեան երակներով, այնպէս որ, մարմնի մէջ ոչ մի գործարան այնչափ շատ արեան անօթներ չունի, որչափ ուղեղը։ Սրա պատճառն էլ այն է, որ ուղեղը իր ուժերը պահպանելու համար սննդի կարիք շատ ունի Այսպէս, եթէ մարդուս մարմնը միջին թուով 120 ֆունտ հաշուենք, իսկ ուղեղինը 3, այն ժամանակ ուղեղը մարմնի  $\frac{1}{40}$ -րդ մասն է կազմում. եթէ այդպէս է, նշանակում է ուղեղը մարդու արեան  $\frac{1}{40}$  րդ պիտի գործադրէր, այն ինչ այդպէս չէ, որովհետև նա զործադրում է բոլոր արեան  $\frac{1}{6} - \frac{1}{5}$  մասը <sup>1)</sup>։ Այսպիսով տեսնում ենք, որ մարմնի մէջ ուղեղը մնացած գործարաններից շատ արիւն է ստանում։ Ուղեղի ագահութիւնը աւելի շատանում է, երբ հոգեկան յուղմունքներ, զրգուններ և աշխատանքներ շատ է լինում։ Երբ ուղեղը իր բաժնից աւելի արիւն գործածէ, այն ժամանակ մարմնի միւս մասները իրանց բաժնից պակաս ստանալով, հետզհետէ թուլանում են. այս զրութիւնը որչափ երկար շարունակուի, այնչափ էլ միւս գործարանները աւելի են թուլանում և մարդն էլ տանջւում։ Մտաւոր և փեղկապական ծանրաբեռնութիւնից, հասակաւորներն էլ չարչարւում, հիւանդանում վնասում են. իսկ ապա ինչ կը լինի նոր աճող, մատաղ սերնդի դրութիւնը։ Երբ դեռահաս, երկածո մանուկները այսպիսի դրութեան լինին, նշանակում է թէ, մարմնի իւրաքանչիւր մասին սնունդ տուող արիւնից խլել և թոյլ չտալ նրանց կանոնաւոր աճելու։ Այսպիսի դէպքերում, բնականաբար դեռահասները հիւանդու, նիհար, փոքր և ուժասպառ են լինում Աղջկների մտաւոր ծանրաբեռնութիւնն աւելի վնասակար է՝ քան տղաներինը։ Յայտնի է, որ մի որոշ հասակում, աղջկները տղաներից աւելի արագ են աճում և հենց այդպիսի ժամանակում, երբ նրանց

<sup>1)</sup> Prof. Schultze – Überburdung.

գործարանները, մանաւանդ մայրութեան համար պատրաստուող մարմնի մասերը, պէտք է կանոնաւոր աճեն, զարգանան, մեծանան ահա մի այդպիսի միջոցում, երկար ու բարակ չմտածող ծնողները, առաջնորդները, դաստիարակները ստիպում են նրանց ժամերով նստել սեղանի առաջ աշխատել ու աշխատել՝ որ քննութիւն բռնեն, լաւ թուեր ստանան, գովասանքի արժանանան։ Այսպիսի դրութիւնից յետոյ, անշուշտ նրանց օրգանները վնասուում են. այն ինչ, դրանց փոխարէն նրանց պէտք է մաքուր օդ, թեթև շարժումներ, առատ սնունդ և չափաւոր աշխատանք։ Այս բանի հետ աշքաթող չպիտի անել և այն նշանաւոր հանգամանքը, որ դեռահամաները բացի իրանց աշխատանքի համար զործածող աննդից, պահանջում են մի ուրիշ աւելորդ սնունդ էլ՝ որը հասակաւոր մարդուն այնչափ պէտք չէ. այսինքն, դեռահամաները իրանց մարմնի մասերը մեծացնելու համար էլ սնունդ են պահանջում. ուրեմն, սրանց սնունդն էլ շատ է լինելու ազատութեան, հանգատութեան, քնի ժամանակը երկար։

Վերսում ասացի, թէ տաղանդներ, հանճարներ, հանգիստ խաղաղ կեանքով աշխատանքով կարելի է ձեռք բերել. գրա համար էլ ամենքի պարտաւորութիւնն է, հնարաւորին չափ, իրանց փոքրերին բարեխիղն կերպով կըթել, նրանց վրայ ուշք դարձնել, սէր առաջացնեն դէպի աշխատանքը, որ նրանք աշխատել սովորեն, աշխատանք վնահատել կարողանան։ Մեր ոյժերը, միայն կանոնաւոր վարժութեամբ կարող են աճել. դեռ շատ վաղ, օրօրոցից սկսած՝ մայրը իր սիրասուն դաւակի մէջ այդ զգացումը պիտի առաջ բերէ։ Բացի դրանից, մանուկների կեանքի, նիստ ու կացի, ընկերների հետ խաղալիս, գործ կատարելիս, պէտք է այնպէս պատրաստել՝ որ նրանք մեծանալիս, կեանքի խնջոյքի մէջ ոչ թէ հիւրեր, այլ տան տէրեր, կառավարողներ լինին։ Լինել մարդ նշանակում է լինել կոռուզ, աշխատող եւ զէնքեր ունեցող։

Կեանքը գեղեցիկ, հաճելի է մարդուն այն ժամանակ, երբ նա աշխատանքի հետ կապուած է, երբ աշխատանքի պըտուղը տեսնում, վայելում է. այլապէս, կեանքի իսկական ալը համը պակաս է։ Հենց այս պատճառով, տղաների խաղալու ժամանակ պէտք է այնպէս առաջնորդել որ նրանք չողնեն, չթուկանան. այլ պէտք է ոյժերը խաղերով զարգացնել, մկանները ամրացնել և նրանց կամքը զօրեղացնել։ Ծնողները, ըն-

տանիքները, դպրոցները պէտք է աշխատեն ամենից առաջ իրանց սաների մէջ աշխատելու ընդունակութիւնը առաջ տանեն. ձշմարիտ է, գեռահասները տարիներով սովորելով գիտութիւն, պատրաստառութիւն են ձեռք բերում, բայց միայն դրանք չեն նրանց համար ամենից թանկագին բաները, այլ հաստատուն, աշխատող ոյժ էլ պէտք է զարգացնել նրանց մէջ: Կեանքի անողոք կուռի մէջ խորասուզուելու ժամանակ մտնուկների անգիր արած, չորոցամաք տեղեկութիւնները այնշափ պէտքական չեն լինի, այլ շուտով մոռացւում, զնում են: Սրա հակառակ, երբ նրանց ոյժերն ու ընդունակութիւնները, կանոնաւոր աշխատանքի սովորեցրած, վարժեցրած լինին՝ այն ժամանակ նրանք նեղ հանդամանքների մէջ իրանց ստացած մտաւոր դրամագլուխը մշտական աշխատանքի ընդունակութեամբ՝ կարող են մեղմացնել, ուժերը պահել ու ապրել Ուրեմն, պէտք է աշխատանքի միջոցով, ապագայ ժողովրդի ուժերը զարգացնել և կազմակերպելով առաջ տաներ:

Աշխատանքից բղխում է կենսական ջրի աղբիւրը, այն աղբիւրը՝ որը մեր մարմինը ամրացնում և ոգեսրութեան անսպառ աղբիւր գտանում: Աշխատանքը պարունակում է այնպիսի առողջացնող ոյժ, որ իրա հասցրած վէրքերը ինքն էլ բուժում է: Կանոնաւոր աշխատողի ոյժերը աւելի զօրեղանում է այն ժամանակ՝ երբ նա այդ կանոնաւոր գործադրում, շահեցնում է: Մկանունքների յոգնածութեան և աշխատանքի անհրաժեշտութեան մասին այսչափով բաւականանալով՝ անցնեմ իսկական խնդրին:

Խ'նչ բան է մտաւոր յոգնածութիւնը, երբ է առաջ գալիս և ի՞նչ նշանակութիւն ունի մասնութ յառաջադիմութեան և զարգացման համար:

Երբ մէկը ուժերը լարած աշխատում, յոգնում է, նա նոյն եռանգով և նոյն չափով հանգստանալու համար պէտք է մտածէ, Որպիսեա մկանունքները առանց նեարդերի իրանք իրանց շարժուել, աշխատել չեն կարող, դրա համար երբ մկանունքները յոդնում են, յոդնում են նոյնպէս նրանց կառավարող նեարդերը. սրանց հրաման առուղ կենդրուններն էլ գտնւում են ուղեղի որոշ մասերում: Երբ սրանց հրամաններ կատարող նեարդերը յոդնում, թուլանում են՝ նշանակում է իրանք էլ թուլացած, անզօր են և չեն կարող նոր ուժով հրամաններ արձակել, գործ, աշխատանք կատարել տալ: Ուրեմն, երբ մկա-

Նունքները յոգնում են, յոգնում են նոյնպէս նեարդերը և նրանց կեղրոնները: Ամեն անդամ, երբ կամաւոր գործ ենք կատարում, մի որոշ չափով յոգնում է նեարդային համակարգութիւնը և որչափ աշխատանքը երկար, ծանր լինի, այնչափ էլ նեարդերը յոգնում, թուլանում են: Ուրիշ խօսքով, որչափ մկանունքների գործողութիւնը թուլանում ցածրանում է, այնչափ էլ նրանց հետ կապուած նեարդերի լարուած դրութիւնը բարձրանում է: Աշխատելու ժամանակ, մկանունքների մէջ հետզհետէ կազմւում, առաջ է գալիս, վնասակար, թիւնաւոր նիւթ, որը կամաց կամաց ազդելով մկանունքներ կառավարող նեարդերի վրայ. թուլացնում, արգելում են գործելու: Այդ վնասակար նիւթը միայն մկանունքների մէջ չի մնում, այլ հետզհետէ տարածւում է չորս կողմի բջիջների մէջ և արեան միջոցով մարմնի զանազան մասերում պտոյտներ անելով՝ ամեն տեղ նոյն վատ, աշխատանք պակասեցնող ազդեցութիւնն է անում, դրա համար էլ նորից կազդուրուելու համար շատ ժամանակ է պէտք: Երբ մինչև յոգներու աստիճան չենք աշխատում, այլ ժամանակ առ ժամանակ հանգստանում, նորից սկսում և այսպէս շարունակում ենք՝ էլ ծանր յոգնածութիւն առաջ չի գայ և առաջն առնելն էլ շատ հեշտ է լինում: Ամեն անդամ, երբ Փիզիքական մտաւոր աշխատանք է կատարում, միշտ էլ որոշ չափով յոգնածութիւն է առաջ գալիս: Ինչպէս Փիզիքական յոգնածութեան պատճառը մկանունքների մէջ առաջ եկած թունաւոր նիւթ է համարւում, այնպէս էլ մտաւոր յոգնածութեան պատճառը, ենթադրում է, թէ ուղեղի մտաւոր աշխատանքի ժամանակ ուղեղի բջիջներից արտադրուած թունաւոր նիւթն է: Ուրեմն, Փիզիքական և մտաւոր աշխատանքի ժամանակ նման նիւթեր են առաջ գալիս և երկուսն էլ յոգնածութեան պատճառը գառնուում: Աշխատանքն որչափ էլ թեթև լինի, եթէ երկար շարունակուի, դարձեալ յոգնածութիւնն է առաջ բերում. սրա հակառակ, որչափ կարճ կամ հանգստութեամբ կատարուի՝ այնչափ էլ աննշմարելի յոգնածութիւնն է առաջ գալիս:

Այսպիսի դէսքերում շատ մեծ նշանակութիւն ունի մարդու կազմուածքը, կենցաղավարութիւնը, տարուայ ժամանակը, օրուայ եղանակը, զանազան պատահական դէքեր, անկանոն քունը, չափաղանցութիւնները և այլն: Չնայելով՝ սրանց, բայց և այնպէս, յոգնածութիւնը ամեն մարդու համար է և իւրաքանչիւր ոք որոշ շափով դրան ենթարկում է: Եթէ մարդկանց

իրանց յոգնելու աստիճանի համեմատ խմբերի բաժանենք, կը տեսնենք, որ նրանք զանազան աշխատանքի ժամանակ՝ դարձեալ միևնոյն օրէնքին են ենթակայ. Արդէն առանձին գործիքներով ցոյց տրուած է, որ մտաւոր աշխատանքից յետոյ՝ անմիջապէս մկանունքների ոյժը պակասում է. իսկ մտաւոր յոգնածութիւնից յետոյ՝ մկանունքները զգալի կերպով թուլանում են. Այսպէս ուրեմն, մտաւոր յոգնածութիւնն էլ իր կողմից աղդում է մկանունքների վրայ. դրա համար էլ, մտաւոր ծանրաբեռնուած մարդը, մարմնով թոյլ, վտիտ և նիհար է լինում: Պրօֆէսօր Մօսօն<sup>1)</sup> առաջին անգամ ցոյց տուեց Փիզիքական և մտաւոր յոգնածութեան մէջ եղած սերտ կազը և նրա նշանակութիւնը: Նրա կարծիքով, երբ մարդ մտաւոր սաստիկ լարուած դրութեան է, այն ժամանակ մկանունքների աշխատանքի յաջողութիւնը պակասում է և ընդհակառակը, երբ երկարատև Փիզիքական աշխատանքով է զրադուած՝ մտաւոր ընդունակութիւնները զգալի կերպով ցածրանում են. Այս երեսյթիներն այսպէս են քացատրուում. որովհետև մկանունքները իւրաքանչիւր գործողութիւն, աշխատանք, կատարում են նեարդերի միջոցով, դրա համար ամեն մի Փիզիքական գործունէութեան միջոցին նեարդերն էլ յոգնում են. Միւս կողմից, ուղեղի յոգնածութիւնը թուլացնում է մկանունքների շարժողութեան ոյժը: Շատ անգամ մտաւոր աշխատանքը կամ որևէ գրքի ընթերցանութիւնը այնշափ մեղ հետաքրքրում, գրաւում է, որ մեր քունը փախցնում է, հեռացնում է յոգնածութեան միտքը և մենք շատ լաւ ենք զգում. ընդհակառակը, երբեմն էլ Փիզիքական աշխատանքը կարծես հեռացնում է մտաւորի յոգնածութիւնը: Խօսապէս երկու դրութիւնն էլ խարուսիկ է և զրաւիչ, քանի որ դրանից յետոյ յոգնածութիւնն աւելի սաստիկ է լինում և բոլոր նշաններն էլ զգալի կերպով տեսնում ենք: Այսպէս շատ անգամ պատահել եմ աշակերտների, որոնք երբեմն այնպիսի անմիտ, կցկոտը կերպով են խօսում և իրանց միտքը կիսատ պուատ արոտայայտում՝ որ օտարն անշուշտ հոգեկան հիւանդի տեղ կընդունէր. այն ինչ, երբ պատճառները պարզւում են՝ ամեն ինչ հասկանալի է դառնում: Մի անգամ ծանօթ աղջիկներից մէկը, ուղում էր մի քան հաղորդել. նա այնպէս անկապ, կցկոտը էր խօսում, որ ես ոյինչ չհաս-

<sup>1)</sup> Mosso-Die Ermündung.

կացայ. Տեսնելով զարմանքս, բարկացած, հեռացաւ. Մի քանի ժամից յետոյ, երբ հարցրի առաւտուայ դրութեան պատճառը՝ նա ժամանակով յայտնեց. «մաքերս շատ ցրուած էին և չէի կարող կանոնաւոր կենդրոնանալ, որովհետև մինչև առաւտուայ ժամը չորսը ուրեմն ամբողջ գիշերը, մի հետաքրքիր վէպի ընթերցանութեամբ էի պարապած»: Իմ աշակերտներիցս մէկի վրայ կատարած դիտողութիւններից երևաց, որ նրա թուլանալու և չկեդրոնանալու պատճառը, անյագ և անյարմար ընտրութեամբ վէպիկ կարդալն էր: Նա սիրահարուած էր, իր մաքին ու ցանկութիւններին պաշար առուղը՝ այդ ուղղութեամբ գրքերի ընթերցանութիւնն էր եղել: Մի ուրիշ ընդունակ աշակերտ, դաս պատմելիս, մէկ էլ կանդնում չէր կարող շարսւնակել. սրաի բարկութիւնից խեղճը լալիս էր և ընկերներն էլ վկայում էին, որ նա շատ է սովորել՝ այս բանը ըաւտկանին երկար միջոց կրկնուեց, վերջը պարզ կերպով երևաց նրա մըտաւոր յոգնած լինելը: Այս տղան մի քանի առարկաներ անհասկանալի լինելու պատճառում՝ սովիպուած շարունակ անգիր է արել, որ գոնէ գրքի խօսքերով կարողանայ արտայայտել և ուսուցչի միաւորներից ու յանդիմանութիւններից աղատուի. այս աշակերտը սաստիկ նեարդային էլ դարձել: Մի շատ ընդունակ աշակերտուհի տարիներով դպրոցում առաջինն էր համարւում. վերջին աարիներում միշտ գանդատում էր. թէ սովորածը միտքը չի մնում. երեկոյեան իմացածը, առաւտուեան մոռանում էր, այնպէս որ, այժմ նա սովիպուած դասից առաջ կամ առաւտուներն էր սովորում և հազիւ հազ բաւարար աշակերտուհի համարում: Պրօֆէսոր Մօսօն, իր գեղեցիկ աշխատութեան մէջ ֆիզիօլոգիական մոլորութիւն է համարում այն ուսուցիչների ու մարդկանց վարմունքը, երբ մանկան մտաւոր յոգնածութիւնը թեթևացնելու հանգստացնելու համար, մարմնամարզութեամբ կամ սրանց նման մկանունքներ լարող խաղերով են զրադեցնում: Զէ որ մկանունքները լարուելով պէտք է ստիպել յոգնած նեարդերին և նրանց կառավարող կեդրոներին գործ կատարել և դրանով, ինչպէս իմացանք, թունաւոր նիւթ արտադիելով՝ աւելի թօւլացրում են նեարդային հիւսուածներն ու մկանունքները: Նրա նման էլ, երբեմն տգէտ առաջնորդները, ծնողները մանուկներին ֆիզիքապէս աշխատեցնելուց, յոգնեցնելուց յետոյ՝ կարծում են, թէ նրանք մտաւոր կերպով հանգստացած են և ստիպում են նրանց նստել, պա-

րապել: Ո՞րպիսի թիւրիմացութիւն: Խեղճերը ստիպուած յոդ-նած գլուխները լարում են, որ մի բան սովորեն՝ որպէս զի հետևեալ օրուայ պատիմներից յանդիմանութիւններից ազա-տուեն: Ի՞նչ օգուտ, երբ աշխատեն էլ, չաշխատեն էլ, դար-ձեալ իրանք են տուժելու. այսինքն կամ բարոյապէս պիտի յանդիմանուեն կամ մարմնի այս կամ այն մասը թուլացնեն: Պրօֆէսոր Կրեպելին<sup>1)</sup> արդէն հաստատուն փաստերով ապա-ցուցել է, որ երկու ժամուայ մանդալը դեռահասներին մտա-ւոր կերպով այնչափ է յոդնեցնում, որչափ մի ժամուայ թուա-րանական խնդիրներ վճռելու: Գրեսրախ իր հետազոտութիւն-ներով դրական կերպով ցոյց տուեց, թէ ինչպէս Փիդիքական և մտաւոր աշխատանքը մէկմէկու վրայ վատ են աղդում և թուլացնում: Պրօֆէսոր Ցիեն նոյն բանը ապացուցեց իր է ա-տե զի օմեա հնարած գործիքով:

Հասարակ, պարզ դիտողութիւններով անդամ, պարզ կը տեսնենք մտաւոր և փիզիքական աշխատանքից առաջացած նշանները, բայց այս մասին յետոյ: Եթէ յոդնածութեան վերա-բերեալ կարծիքներ ի մի հաւաքենք, մոտաւորապէս հետևեալ եղրակացութիւնն է դորս գալիս: Թէ ինչ բան է օսօսիկ յոդ-նածութիւնը և ինչպէս կարելի է ճիշտ բացատրել, այդ դեռ վերջնականապէս դրական կերպով պարզած չէ: միայն գիտական փորձերն ու տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ յոդնածու-թեան ժամանակ մեր մէջ երկու գործողութիւնները, բարդ նիւթերը բաժանում, լուծում են իրանց սկզբնական բաղկացուցիչ մա-սերին և գործադրում են: այդ պատճառով էլ, իւրաքանչիւր Փիզիքական և մտաւոր աշխատանքի ժամանակ ուժի շարը հետզնտէ սպառուում է և նոր ուժ տուող նիւթի կարելի է գուց-ւում: ճիշտ այնպէս, ինչպէս շոգեմեքենայի աշխատելու ժամա-նակ վառուող նիւթերը ոյժ և գործ է առաջ բերում: Նիւթի պակասելու հետ, մեքենայի գործունէութիւնը դանդաղում, կանգնում է և գործելու համար նոր նիւթ է պահանջում:

Մարմինը առանց նիւթերի, այսինքն սննդի, չի կարող գործել ուրեմն, անհամեշտ է նիւթեր մատակարարել: Այս էլ պէտք է ինչուտի ունենանք, որ մարմնի մէջ լուծուող նիւթե-րից մի քանիսը, կազմուածքի վրայ աղդում են որպէս թոյներ

<sup>1)</sup> Kraepelin Über geistige Arbeit.

և դրանով պակասեցնում են մարմնի աշխատող ոյժը։ Մի քանի դէպքերում, այս թունաւորման առաջը կարելի է առնել այն ժամանակ, երբ մկանունքներին կարճ ժամանակ հանգստութիւն տանք։ Մարդու ոյժը միայն այն ժամանակ է սպառում, երբ մարմինը իր առողջութիւնը պահելու համար աւելի սնունդ է դործ զնում, իսկ արիւնից քիչ ստանում։ այսպիսի դէպքերում մարմնի գործունէութիւնը յաջող չի լինի և հետպհետէ կը պակասի և կը թուլանայ։ Առօրեայ փորձերը ցոյց են տալիս, որ կարճ աշխատանքից յետոյ, յոգնածութեան նշանները շատ շուտ են անցնում։ իսկ երբ աշխատանքը երկար է շարունակւում՝ այն ժամանակ յոգնածութիւն է առաջ գալիս։ Բացի դրանից, կարելի ասել, որ մարդու և զարգացած կենդանիների ուղեղի մէջ արթուն ժամանակ սնունդն աւելի շատ է դործ ածւում, քան ստանում։ սրանից է յառաջ է գալիս յոգնածութիւն, իսկ այս միայն քնելով կարելի է վերացնել։ Այս ամենից պարզ երեսում է, որ յոգնածութիւնը աշխատանքի անբաժան ընկերն է։ ուրեմն, որտեղ կայ աշխատանք, այնտեղ կայ անպատճառ յոգնածութիւն։ Սթէ ուղենանք բոլորովին յոգնածութիւնից ազատուել, նշանակում է, պէտք է աշխատանքից փախչել, անգամ չապրել, քանի որ ապրել առանց աշխատանքի անհնարին է։ Այսպիսի ենթադրութիւն իհարկէ ոչ մի ժամանակ չվիտի դուրս բերենք. այլ հարցն այն է, թէ ինչ չափով պէտք է աշխատենք և չափից գուրս աշխատելը ինչ աստիճանի լինասակար է։ Սովորական փորձերը ցոյց են տալիս երբ յոգնած մանուկների հետ շարունակում ենք պարապել, այն ժամանակ նրանք ամենասովորական հարցերին չեն կարող արագ պատասխանել և շուտով ըմբռնել։ այդ միջոցին կատարած դործը միանգամայն աւելորդ, ապարդիւմ է անցնում։ Սրա հակառակ, եթէ նոյն գործը նրանց թարմ ժամանակ կատարենք, անհամեմատ աւելի արդիւնք կստացուի։ Այս պատճառով է արած դպրոցներում դասամիջոցները, առարկաների կանոնաւոր դասաւորութիւնը։ Յայտնի է նոյնպէս, որ զանազան առարկաներ, որոշ աստիճանի յոգնածութիւն են պատճառում։ Գրեսբախ, այս բաները կանոնաւոր, հաստատ վաստերով ապացուցեց։ Նա դրանով միջոց տուեց աւելի լուրջ, ծանր դասերը աշակերտների թարմ ժամերին նշանակել և ընդհակառակը։ Այս միջոցով, նա աշակերտների հանգստութեանը մեծ զարկ տուեց։ Նոյնպէս էլ Կէմնի, իր էն էր գիօգը աֆ

դործիքով ապացուցեց, որ մաթեմաթիկայի և մարմնամարզութեան դասերը ամենից արագ և շատ, մկանունքների յոգնածութիւն են պատճառում. այն ինչ պատմութիւնները հանդստութեան համար աւելի բարեյաջող միջոցներ են: Այս տեսակէտով, լեզուները միջին տեղն են բռնում. երգեցողութիւնները, նկարչութիւնները զգալի կերպով յոգնեցնում են այն տղաներին՝ որոնք լաւ են աշխատում:

Ա. ԶԻԼԻՆԿԱՐԵՆԱՆ

(Կը շարունակուի)